«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության
միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.

«23» հունիսի, 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ Պետրոսյան Հ.Ռ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քրեական դատավարություն

Մասնագիտություն՝**042101.00.6** «Իրավագիտություն»
Կրթական ծրագիր՝ **042101.01.6** «Իրավագիտություն» (հեռակա ուսուցում)

Դասընթացի անոտացիան

Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քրեական դատավարության՝ որպես իրավապահ գործունեության տեսակի և իրավունքի ճյուղի էությունը և նշանակությունը, քրեական դատավարության հիմնարար դրույթներն ու կատեգորիաները: Ուսումնասիրվում են նաև մինչդատական վարույթի ընդհանուր դրույթները, ապացուցողական գործողությունների օրինաչափությունները, դատական վարույթների ընդհանուր պայմանները, առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացակարգը, հատուկ կարգով դատաքննության իրականացման կառուցակարգերը, դատական վերանայման ընդհանուր պայմանները, վերաքննության և վճռաբեկության կառուցակարգերը:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ քրեական դատավարություն առարկայի վերաբերյալ, ձևավորել առանձին ընթացակարգեր սահմանող քրեադատավարական նորմերի մեկնաբանման հմտությունները և կարողություններ:

Դասընթացի խնդիրներն են.

- Ներկայացնել և սահմանել քրեական դատավարության՝ որպես իրավապահ գործունեության էությունը, քրեադատավարական հիմնական հասկացությունները:
- Ներկայացնել ՀՀ քրեական դատավարության իրավունքի բովանդակությունը և էությունը, նպատակները և համակարգը:
- Ներկայացնել ՀՀ քրեական դատավարության սկզբունքներն ու խնդիրները:

- Պարզաբանել և ներկայացնել քրեական դատավարական սուբյեկտների իրավական կարգավիճակները, վերջիններիս լիազորություններն իրենց գործառույթներն իրականացնելիս։
- Ներկայացնել քրեադատավարական ապացույցներն ու ապացուցումը։
- Ներկայացնել քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառության առանձնահատկությունները։
- Ներկայացնել քրեական վարույթ նախաձեռնելու կարգը։
- Ներկայացնել մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները։
- Բացատրել քրեական հետապնդում հարուցելու, մեցադրանք ներկայացնելու, քրեական հետապնդման ժամկետների կասեցման, քրեական հետապնդման դադարեցման, քրեական վարույթը կարճելու նշանակությունը և դատավարական կարգը։
- Սահմանել ապացուցողական գործողությունների հասկացությունը, բացատրել դրանց կոնկրետ տեսակների դատավարական կարգը։
- Ներկայացնել դատական վարույթի ընդհանուր պայմանները։
- Բացատրել մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթները։
- Սահմանել առաջին ատյանի դատարանում դատաքննության կառուցվածքը և բովանդակային տարրերը։
- Բացատրել նախնական, հիմնական և լրացուցիչ դատալուսմների կարգը։
- Ներկայացնել համաձայնեցման և համագործակցության վարույթների ընթացքը և հանգուցալուծման հնարավոր տարբերակները։
- Բացատրել դատական վերանայման դերը և նշանակությունը։
- Ներկայացնել վերաքննության և վճռաբեկության՝ որպես ինքնուրույն կառուցակարգերի բովանդակությունը և կարգը։

- Ներկայացնել հատուկ վերանայման վարույթի հիմքերը, հատուկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտները և առարկան։
- Ներկայացնել բացառիկ վերանայման վարույթի հիմքերը, հատուկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտները և առարկան։
- Ներկայացնել հատուկ և բացառիկ վերանայման կառուցակարգերում համապատասխան բողոքների քննարկման կարգը։
- Ներկայացնել առանձին անձանց նկատմամբ իրականացվող և առանձին տեսակի վարույթներում դատաքննության առանձնահատկությունները։

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն է հանդիսանում քրեական դատավարությունն ընդհանրապես, իսկ առարկան՝ քրեական դատավարական իրավունքը մասնավորապես։

Դասընթացի մուտքային պահանջները

Ուսանողը պետք է ունենա բավարար մտավոր կարողությունները դասընթացի շրջանակներում իրեն մատուցվող նյութն ընկալելու, տրվող հանձանարարությունները բավարար մակարդակով կատարելու, նյութը վերլուծելու, ինչպես նաև առանձին ելույթի ձևով այն ներկայացնելու համար։

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին։

Դասընթացի արդյունքնում ուսանողի կողմից ձեռք են բերվում գիտելիքներ քրեական դատավարության՝ որպես իրավապահ գործունեության տեսակի և իրավունքի ճյուղի էության և նշանակության, քրեական դատավարության հիմնարար դրույթների և կատեգորիաների, մինչդատական վարույթի ընդհանուր դրույթների, ապացուցողական գործողությունների օրինաչափությունները, դատական վարույթների ընդհանուր պայմանների, առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացակարգի, հատուկ կարգով դատաքննության իրականացման կառուցակարգերի, դատական վերանայման ընդհանուր պայմանների, վերաքննության և վճռաբեկության կառուցակարգերի վերաբերյալ։

1. **Գիտելիք և իմացություն**

Դասընթացը հաջողությամբ ավարտելու դեպքում ուսանողը կտիրապետի հետևյալ թեմաներին՝

1. Քրեական դատավարության՝ որպես իրավապահ գործունեության էությունը, քրեադատավարական հիմնական հասկացությունների վերաբերյալ։
2. ՀՀ քրեական դատավարության իրավունքի բովանդակության, էության, նպատակների և համակարգի, սկզբունքների ու խնդիրների վերաբերյալ։
3. Քրեական դատավարական սուբյեկտների իրավական կարգավիճակների, վերջիններիս լիազորությունների վերաբերյալ։
4. Քրեադատավարական ապացույցների և ապացուցման վերաբերյալ։
5. Քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառության առանձնահատկությունների վերաբերյալ։
6. Քրեական վարույթ նախաձեռնելու կարգի վերաբերյալ։
7. Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանների վերաբերյալ։

8. Քրեական հետապնդում հարուցելու, մեցադրանք ներկայացնելու, քրեական հետապնդման ժամկետների կասեցման, քրեական հետապնդման դադարեցման, քրեական վարույթը կարճելու վերաբերյալ։
9. Ապացուցողական գործողությունների հասկացության, դրանց կոնկրետ տեսակներ վերաբերյալ։
10. Դատական վարույթի ընդհանուր պայմանների վերաբերյալ։
11. Մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթների վերաբերյալ։
12. Առաջին ատյանի դատարանում դատաքննության կառուցվածքի և բովանդակային տարրերի վերաբերյալ։
13. Նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումների վերաբերյալ։
14. Համաձայնեցման և համագործակցության վարույթներիընթացքի և հանգուցալուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ։
15. Դատական վերանայման դերի և նշանակության վերաբերյալ։
16. Վերաքննության և վճռաբեկության՝ որպես ինքնուրույն կառուցակարգերի վերաբերյալ։
17. Հատուկ վերանայման վարույթի հիմքերի, հատուկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտների և առարկայի վերաբերյալ։
18. Բացառիկ վերանայման վարույթի հիմքերը, հատուկ վերանայման կարգով բողոքարկման սուբյեկտները և առարկան։
19. Հատուկ և բացառիկ վերանայման կառուցակարգերում համապատասխան բողոքների քննարկման կարգի վերաբերյալ։

20. Առանձին անձանց նկատմամբ իրականացվող և առանձին տեսակի վարույթներում դատաքննության առանձնահատկությունների վերաբերյալ։

Գիտելիքի և իմացության կիրառում

1) ազատորեն օգտագործել դատավարական հասկացությունները, կիրառել քրեական դատավարության օրենսդրության դրույթները,

2) վերլուծել քրեական դատավարության յուրաքանչյուր փուլի նշանակությունը և խնդիրները, առանձնահատկությունները,

3) վերլուծել, մեկնաբանել և ճիշտ կիրառել քրեական դատավարության իրավունքի նորմերը, նաև օգտագործել դրանք գործնական խնդիրների լուծման համար,

4) ճիշտ կազմել դատավարական բնույթի փաստաթղթեր,

5) ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների հետ աշխատելու հմտություններին, որոշել յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, կատարել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցմանն ուղղված գործողություններ, անհրաժեշտության դեպքում տրամադրել խորհրդատվություն՝ քրեաիրավական հարաբերությունների առնչությամբ։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

1) Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնել, բացատրել, ինչպես նաև՝ ստանալ քրեադատավարական ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, խնդիրներ և լուծումներ։

2) Կարող է իր գործունեության ընթացքում կիրառել Datalex, Hudoc, Hudocexe տեղեկատվական հարթակները՝ իրավական խնդիրների լուծումն ապահովելու համար։

3) Կարող է հաղորդակցվել առնվազն մեկ մասնագիտական օտար լեզվով։

4) Կարող է հավաքել, մշակել և մեկնաբանել քրեադատավարական իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար։

5) Կարող է հետևել մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին՝ պատասխանատվությամբ իրականացնելով իր մասնագիտական գործառույթները։

4. Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)

1) Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ քրեադատավարական իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար։

2) Կարող է քրեադատավարական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում։

5. Ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)

1. Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ գործունեության։

2. Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու քրեադատավարական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, քրեադատավարական մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին։

3. Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս։

4. Ունակ է՝ աշխատելու թիմում։

5. Ունակ է՝ անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը։

6. Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար։

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասավանդման ընթացքում կիրառվում են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ և դասավանդման մեթոդներ։ Ուսումնական նյութի մատուցումն իրականացվում է բավականին տարաբնույթ մեթոդներով, մասնավորապես դասախոսության, սեմինար պարապմունքների անցկացման, ինդուկտիվ և դեդուկտիվ, ֆոկուս-խմբային քննարկումների, առանձին խնդիրների վերաբերյալ խորին հարցազրույցների, սոցիալական հարցումների միջոցով։

Բացի այս ամենը՝

1) մտագրոհի օգնությամբ ուսանողների հետ քննարկվում են կարծիքներ, այնուհետև դասախոսի կողմից ներկայացվում է նյութը, ուսանողներին տրվում է հնարավորություն համեմատելու արտահայտած կարծիքները.

2) իրականացվում է թեմայի կարևոր դրույթների, դասակարգումների, սահմանումների հստակեցում և մատնանշում.

3) նորմատիվ իրավական ակտերի և դատական պրակտիկայի քննարկում.

4) քրեադատավարական օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծերի քննարկումներ, այդ թվում՝ էլեկտրոնային հարթակում հրապարակված նախագծերով առաջարկությունների ներկայացում.

5) գիտակագործնական հարցերով տարբեր գերատեսչությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և կոնֆերանսներին ուսանողների ներգրավածության ապահովում:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական կրթաբլոկում»՝ 8 ակադեմիական կրեդիտ (288 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 24 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 7 և 8 կիսամյակներում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**288**

1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**40**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**24**

1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**235**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**13**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	քննություն, ստուգարք գնահատական ով

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսություններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Քրեական դատավարության ընդհանուր դրույթները	**12**		**1**
Թեմա 2. Քրեական վարույթի սկզբունքները	**12**		**1**
Թեմա 3. Քրեական դատավարության սուբյեկտները	**12**	**1**	**1**
Թեմա 4. Ապացույցները և ապացուցումը քրեական դատավարությունում	**12**	**1**	**1**
Թեմա 5. Քրեադատավարական հարկադրանքի միջոցները	**12**	**1**	**1**
Թեմա 6. Քրեական վարույթ նախաձեռնելը	**12**	**1**	**1**
Թեմա 7. Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները	**12**	**1**	**1**
Թեմա 8. Հանրային քրեական հետապնդումը	**12**	**1**	**1**
Թեմա 9. Հանրային քրեական հետապնդման կասեցումը, քրեական հետապնդումը դադարեցնելը և քրեական վարույթը կարճելը	**12**	**1**	**1**

Թեմա 10. Նախաքննության ավարտը մեղադրական եզրակացություն կազմելով	**12**	**1**	**1**
Թեմա 11. Ապացուցողական գործողությունները	**12**	**1**	**1**
Թեմա 12. Մինչդատական վարույթի դատական երաշխիքները	**12**	**1**	**1**
Թեմա 13. Դատական վարույթների ընդհանուր պայմանները	**12**	**1**	**1**
Թեմա 14. Դատաքննությունն առաջին ատյանի դատարանում	**12**	**1**	**1**
Թեմա 15. Համաձայնեցման վարույթը	**12**	**1**	**1**
Թեմա 16. Համագործակցության վարույթը	**12**	**1**	**1**
Թեմա 17. Արագացված և համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթները քրեական դատավարությունում	**12**	**1**	**1**
Թեմա 18. Դատական վերանայման ընդհանուր պայմանները	**12**	**1**	**1**
Թեմա 19. Վերաքննությունը	**12**	**1**	**1**
Թեմա 20. Վճռաբեկությունը	**12**		**1**
Թեմա 21. Հատուկ վերանայումը	**12**		**1**
Թեմա 22. Բացառիկ վերանայումը	**12**		**1**
Թեմա 23. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթը	**12**		**1**
Թեմա 24. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթը	**12**		**1**
Ընդամենը	**288**	**16**	**24**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Քրեական դատավարության ընդհանուր դրույթները

1) Քրեական դատավարության հասկացությունը, էությունը և նպատակը
2) Քրեական վարույթի իրականացման հիմունքները
3) Հիմնական քրեադատավարական հասկացություններ (քրեադատավարական ֆունկցիաներ, դատավարական ձև, դատավարական երաշխիքներ)
4) Քրեադատավարական իրավունքի հասկացությունը, նշանակությունը և աղբյուրները
5) Քրեադատավարական օրենքի գործողությունը տարածության վրա, ժամանակի մեջ և ըստ անձանց շրջանակի

Թեմա 2. Քրեական վարույթի սկզբունքները

1) Քրեական վարույթի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը
2) Վարույթի հանրայնությունը
3) Բոլորի հավասարությունն օրենքի առջև
4) Անմեղության կանխավարկածը
5) Անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը
6) Իրավաբանական օգնության ապահովումը
7) Մեղադրյալի պաշտպանության ապահովումը
8) Կողմերի հավասարությունը և մրցակցությունը
9) Պատշաճ ապացուցումը
10) Դատական պաշտպանության ապահովումը
11) Վարույթի ողջամիտ ժամկետը
12) Կրկին դատվելու անթույլատրելիությունը
13) Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը
14) Վարույթի լեզուն
15) Դատական վարույթի հրապարակայնությունը
16) Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը

Թեմա 3. Քրեական դատավարության սուբյեկտները

1. Քրեական դատավարության սուբյեկտների հասկացությունը և դասակարգումը
2. Դատարանը
3. Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները
4. Դատախազը
5. Քննիչը: Քննչական մարմնի ղեկավարը
6. Հետաքննության մարմինը
7. Տուժողը
8. Մեղադրյալը
9. Պաշտպանը
10. Գույքային պատասխանողը
11. Վկան
12. Փորձագետը
13. Թարգմանիչը
14. Ընթերական և դատական նիստի քարտուղարը
15. Ներկայացուցչությունը քրեական վարույթում
16. Վարույթին մասնակցության անհնարինությունը

Թեմա 4. Ապացույցները և ապացուցումը քրեական դատավարությունում

1) Ապացույցների հասկացությունը, տեսակները և դասակարգումը
2) Ապացուցումը
3) Ապացուցման տարրերը
4) Ապացուցման առարկան և սահմանները
5) Ցուցմունքները
6) Փորձագետի եզրակացությունը և կարծիքը
7) Իրեղեն ապացույցները
8) Ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները
9) Արտավարութային փաստաթղթերը

Թեմա 5. Քրեադատավարական հարկադրանքի միջոցները

1) Քրեադատավարական հարկադրանքի միջոցների հասկացությունը և դասակարգումը
2) Ձերբակալումը
3) Խափանման միջոցների հասկացությունը, կիրառման, փոխման կամ վերացման իրավաչափությունը
4) Կալանքը
5) Այլընտրանքային խափանման միջոցները
6) Գույքի արգելադրումը
7) Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները
8) Դատավարական սանկցիաները

Թեմա 6. Քրեական վարույթ նախաձեռնելը

1. Քրեական վարույթ նախաձեռնելու աղբյուրները, առիթները և հիմքը
2. Քրեական վարույթի նախաձեռնման կարգը

Թեմա 7. Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները

1) Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանների հասկացությունը և համակարգը
2) Նախաքննության մարմինները և քննչական ենթակայությունը
3) Նախաքննության կատարման վայրը
4) Նախաքննության կատարումը քննչական խմբի կողմից: Քննչական խմբի ղեկավարի լիազորությունները
5) Հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելը
6) Նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը
7) Հետաքննություն կատարելու հիմքը, սկիզբն ու ավարտը

Թեմա 8. Հանրային քրեական հետապնդումը

1) Հանրային քրեական հետապնդումը հարուցելը
2) Մեղադրանք ներկայացնելը, փոփոխելը կամ լրացնելը
3) Հանրային քրեական հետապնդման ժամկետները
4) Հայեցողական քրեական հետապնդումը

Թեմա 9. Հանրային քրեական հետապնդման կասեցումը, քրեական հետապնդումը դադարեցնելը և քրեական վարույթը կարճելը

1) Հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու հիմքերը և կարգը
2) Քրեական հետապնդման կասեցված ժամկետը վերսկսելը
3) Հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու հիմքերը և կարգը
4) Չհարուցված կամ դադարեցված քրեական հետապնդումը նորոգելը
5) Քրեական վարույթի կարճման հիմքերը: Նախաքննության ավարտը քրեական վարույթը կարճելով

Թեմա 10. Նախաքննության ավարտը մեղադրական եզրակացություն կազմելով
1. Մեղադրական եզրակացության նշանակությունը և կառուցվածքը
2. Մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտի դատավարական կարգը
3. Դատախազական հսկողությունը մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտի նկատմամբ

Թեմա 11. Ապացուցողական գործողությունները
1) Ապացուցողական գործողությունների հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը
2) Քննչական գործողությունների կատարման ընդհանուր պայմանները
3) Քննչական գործողությունների տեսակները և կատարման դատավարական կարգը
4) Փորձաքննությունը
5) Գաղտնի քննչական գործողությունների նշանակությունը, կատարման և արդյունքների ամրագրման կարգը, տեսակները

6) Գաղտնի քննչական գործողությունների կատարման ընդհանուր պայմանները

Թեմա 12. Մինչդատական վարույթի դատական երաշխիքները

1) Մինչդատական վարույթի դատական երաշխիքների էությունը և նշանակությունը
2) Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքները
3) Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման դատական երաշխիքները
4) Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքները
5) Սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքները
6) Հանրային մասնակիցների վարութային ակտերի իրավաչափության դատական երաշխիքները
7) Ցուցմունքի դեպոնացման դատական երաշխիքները

Թեմա 13. Դատական վարույթների ընդհանուր պայմանները

1. Ընդդատությունը
2. Դատական վարույթի ընթացակարգային պայմանները
3. Դատական նիստի ընթացակարգային պայմանները
4. Մասնակցությունը դատական վարույթին

Թեմա 14. Դատաքննությունն առաջին ատյանի դատարանում

1) Նախնական դատալսումները
2) Հիմնական դատալսումները
3) Լրացուցիչ դատալսումները և դատավճիռ

Թեմա 15. Համաձայնեցման վարույթը

Թեմա 16. Համագործակցության վարույթը
1. Համագործակցության վարույթի նպատակը և կիրառման պայմանները
2. Համագործակցության միջնորդությունը և համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը

3. Համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգը

Թեմա 17. Արագացված և համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթները քրեական դատավարությունում

Հարց 1. Արագացված վարույթը
Հարց 2. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը

Թեմա 18. Դատական վերանայման ընդհանուր պայմանները

1. Դատական վերանայման բողոքը
2. Դատական վերանայման բողոքի հիման վրա կոլեգիալ կազմով եզրափակիչ դատական ակտ կայացնելը

Թեմա 19. Վերաքննությունը

1. Վերաքննության նշանակությունը, առարկան, սուբյեկտները և ժամկետները
2. Վերաքննիչ բողոքարկման կարգը և վերաքննության սահմանները
3. Վերաքննության կարգով իրականացվող դատաքննությունը
4. Վերաքննության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերը

Թեմա 20. Վճռաբեկությունը

1. Վճռաբեկության էությունը, առարկան և սահմանները
2. Վճռաբեկ բողոքի ընդունման պայմանները և բողոքին ներկայացվող պահանջները
3. Վճռաբեկ բողոքով նախնական վարույթը և դատաքննությունը
4. Վճռաբեկության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը

Թեմա 21. Հատուկ վերանայումը

1. Հատուկ վերանայման էությունը, սահմանները, դատաքննության ընդհանուր կարգը
2. Հատուկ վերանայումը վերաքննիչ դատարանում
3. Հատուկ վերանայումը վճռաբեկ դատարանում

Թեմա 22. Բացառիկ վերանայումը

1. Բացառիկ վերանայման էությունը և նշանակությունը
2. Բացառիկ վերանայման ընդհանուր դրույթները
3. Նոր ի հայտ եկած հանգամանքներով նախնական վարույթը
4. Բացառիկ վերանայման դատական վարույթը

Թեմա 23. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթը

1. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները
2. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով ապացուցման առարկան
3. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ մինչդատական և դատական վարույթների առանձնահատկությունները

Թեմա 24. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթը

1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի ընդհանուր բնութագիրը և այդ վարույթով ապացուցման ենթակա հանգամանքները
2. Բժշկական հարկադրանքի մինչդատական վարույթը
3. Բժշկական հարկադրանքի դատական վարույթը

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Մասնագիտական գրականություն

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների

և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, ԵԽ - 2022թ., Հեղինակներ՝ Հ.Ղուկասյան, Դ.Մելքոնյան, Ա.Նիկողոսյան, 613 էջ:

2. Գ.Ս.Ղազինյան «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն» ընդհանուր մաս, ԵՊՀ 2010:
3. Դիլբանդյան Ս., Հարությունյան Ա., Ղազինյան Գ., Ղուկասյան Հ., Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները | Դասագիրք բուհերի համար Երևան 2019թ., 384 էջ:
4. ՀՀ Քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), մաս առաջին, մաս երկրորդ (հեղինակային խումբ) գիտ. խմբագիր Ա.Ղամբարյան, Երևան Տիգրան Մեծ 2017թ., 608 էջ:

Նորմատիվ իրավական ակտեր

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով) ընդունված 1995 թ. հուլիսի 5-ին /2005 թ-ի և 2015թ-ի փոփոխություններով և լրացումներով/:
6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 30.06.2021թ.,
7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 21.09.1998թ., 09.06.2017թ-ի փոփոխություններով և լրացումներով:
8. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունված 05.05.2021թ.
9. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունված 02.05.2003թ., 07.03.2018թ-ի փոփոխություններով և լրացումներով:

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակություն ունեցող որոշումներ

10. Լ. Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0093/11/11,
11. Է.Եղինյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0008/11/10,
12. Մ. Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/009/12/10,
13. Ս. Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0059/11/10/26/:

14. Ա. Առաքելյանի վերաբերյալ որոշում,ԵԿԴ/0580/06/09,

15. Կ. Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/03/01/09,

16. Հ. Հակոբյանիվերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0128/01/09:

ՄԻԵԴ նախադեպեր

17. Անկախ և անկողմնակալ դատարան ա/ Buzescu v Romania (2005), բ/ Van de Hurk v Netherlands (1994), գ/ Lavents v Latvia (2002), դ/ Posokhov v Russia (2003), ե/ Zlinsat Spol. S.R.O. v Bulgaria (2006), զ/ Clarke v United Kingdom (dec.) (2005), է/ Belukha v Ukraine (2006)

18. Մրցակցություն և կողմերի հավասարություն ա/ Brandstetter v Austria (1991), բ/ Barbera, Messegue and Jabardo v Spain (1988), գ/ Bricmont v Belgium (1989), դ/ Rowe and Davis v United Kingdom (2000), ե/ Edwards and Lewis v United Kingdom (2004), զ/ Neumeister v Austria (1968), է/ Wynen and Centre Hospitalier Interrégional Edith-Cavell v Belgium (2002), Մ. Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԿ ,/0081/01/11:

19. Հրապարակայնություն ա/ B. and P. v United Kingdom (2001), բ/ Riepan v Austria (2000), գ/ Pretto and Others v Italy (1983), դ/ Martinie v France (2006)

20. Գործի քննությունը ողջամիտ ժամկետում ա/ H. v France (1989), բ/ Milasi v Italy (1987), գ/ Bottazzi v Italy (1999), դ/ Baggetta v Italy (1987), ե/ Tomasic v Croatia (2006), զ/ Vaivada v Lithuania (dec.) (2005)

21. Անմեղության կախավարկած ա/ Ringvold v Norway (2003), բ/ Minelli v Switzerland (1983), դ/ Geerings v Netherlands (2007), ե/ Allenet de Ribemont v France (1995)

Լրացուցիչ գրականություն

22. Уголовно-процессуальное право : учебник для бакалавриата и магистратуры / В. М. Лебедев [и др.] ; под общ. ред. В. М. Лебедева. — 2-е изд., перераб. и доп. — М. : Издательство Юрайт, 2016. — 1060 с.

23. Уголовно-процессуальное право Российской Федерации : учебник для бакалавров / Т. Ю. Вилкова [и др.] ; отв. ред. Г. М. Резник. — М. Издательство Юрайт, 2016. — 859